«ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ և ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/12(1)

ք. Գավառ « 14 » հոկտեմբերի 2020թ.

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Ռ. Հակոբյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն Ա. Զանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **489.318 (չորս հարյուր ութսունինը հազար երեք հարյուր տասնութ)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Պայմանագիրը կազմված է հինգ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.12 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Գավառի պետական համալսարան» հիմնադրամ	«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ
ՀՀ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	ՀՀ, ք. Երևան, Քրիստափորի 2/2
«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ Կամո մ/ճ	ՀՎՀՀ 02584897
ՀՀ 16021100146800	Հ/Հ 2050422209671001
ՀՎՀՀ 08402753	«Ինեկոբանկ» ՓԲԸ Կորյուն մ/ճ
Ռեկտոր _____ Ռ. Խ. Հակոբյան	Տնօրեն _____ Ա. Զանյան
Կ.Տ ստորագրություն	Կ.Տ ստորագրություն

Հավելված N 1
14 հոկտեմբերի 2020թ. կնքված
«ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/12(1)» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	30197622	Թուղթ	SvetoCopy, International Paper	A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, (210X297) մմ., 1 տուփի մեջ առկա է 500 հատ թուղթ (ընդամենը 130 տուփ)	կգ	559	181675	325	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	325	30/11/2020թ
2	30192740	Թուղթ	SinArSpectra, APP	Գունավոր թուղթ՝ տպագրելու/պատճենահանման համար, 80 գր/մ, 250 էջ, A4 (210x297) մմ ձևաչափի, (ընդամենը 5 տուփ)	կգ	1550	9688	6,25	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	6,25	30/11/2020թ
3	30199420	Թուղթ	Xing Li, YIWU GUYUE IMPORT and EXPORT CO LTD	Թերթիկներ նշումների համար, ինքնակպչուն, 76 x 76 մմ չափսի, 100 թերթ, դեղին գույնի	հատ	79	7900	100	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	100	30/11/2020թ
4	22991150	Թուղթ	JOJO, JOJO®	ֆոտոթուղթ՝ լուսազգայուն թուղթ սպիտակ, մյուս կողմը սպիտակ A4 240gr, 50 հատ,	կգ	2250	10125	4,50	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	4,50	30/11/2020թ
6	30192740	Թուղթ	SinArSpectra, APP	Թուղթ գունավոր A4, կամ համարժեք 1 գույն, 80 գր/մ2, 500թ. Բաց կապույտ երանգի /5 տուփ/	կգ	1200	15000	12,5	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	12,5	30/11/2020թ
8	30199238	Ծրար	LIBRA, MUREX LTD	Ծրար սպիտակ C6 (114*162մմ) ինքնասոսնձվող	հատ	7	2100	300	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	300	30/11/2020թ
9	30199238	Ծրար	LIBRA, MUREX LTD	Ծրար թափանցիկ պատուհանով, սպիտակ, առանց գրությունների, ինքնասոսնձվող, 115 x 225մմ (A4 ֆորմատի թուղթը 3 մասի բաժանած):	հատ	10	5000	500	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	500	30/11/2020թ
10	30197323	Կարիչ	KW, KW-triO®	Դակիչ-ամրակ, Կարիչ (заклепка), գրասենյակային, գնդիկավոր ասեղների	հատ	3500	3500	1	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	1	30/11/2020թ
11	30197321	Կարիչ	Kangaro, Kangaro Indasries	գրասենյակային կարիչ №10, 20թ. կարելու համար	հատ	350	3500	10	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	10	30/11/2020թ
12	30197321	Կարիչ	Kangaro, Kangaro	գրասենյակային կարիչ №24/6, 30 թ. կարելու	հատ	910	9100	10	ք. Գավառ, Հրանտ	10	30/11/2020թ

			Indasries	համար					Հակոբյան 1		
13	39263410	Ամրակ	TQ, YIWU GUYUE IMPORT and EXPORT CO LTD	Փոքր, գրասենյակային ամրակներ՝ մետաղական կամ պոլիմերային պատվածքով, 28 մմ երկարությամբ, 100 հատ:	հատ	80	1600	20	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	20	30/11/2020թ
15	39241210	Մկրատ	Maped, MAPED HELIX HK Trading CO.LTD	Գրասենյակային, մետաղյա, սուր ծայրով, պլաստմասե բռնակով, 200 մմ երկարությամբ:	հատ	335	3350	10	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	10	30/11/2020թ
16	30192710	Սոսինձ	LIBRA, MUREX LTD	Չոր սոսինձ՝ գրասենյակային (սոսնձամատիտ), 15գր., թուղթ սոսնձելու համար:	հատ	160	19200	120	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	120	30/11/2020թ
17	30192100	Ռետին	Maped, MAPED HELIX HK Trading CO.LTD	Ռետին՝ փոքր, նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար:	հատ	40	2000	50	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	50	30/11/2020թ
18	30192220	Կպչող ժապավեն	Hanber, Hanber M	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն 19մմx36մ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, թափանցիկ, փոքր	հատ	80	4000	50	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	50	30/11/2020թ
19	30192210	Կպչող ժապավեն	Homson, YIWU GUYUE IMPORT and EXPORT CO LTD	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն 48մմx64մ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, տնտեսական, թափանցիկ, մեծ	հատ	350	7000	20	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	20	30/11/2020թ
20	30192121	Գրիչ	Reynolds, Reynolds®	Գնդիկավոր, կապույտ գույնի	հատ	55	16500	300	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	300	30/11/2020թ
21	30192121	Գրիչ	Reynolds, Reynolds®	Գնդիկավոր, կարմիր գույնի	հատ	55	1100	20	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	20	30/11/2020թ
22	30192128	Գրիչ	Zhi Ji, YIWU GUYUE IMPORT and EXPORT CO LTD	Գրիչ գելային, 0.5մմ, սև գույնի	հատ	60	1200	20	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	20	30/11/2020թ
23	30192125	Մարկեր	Spotline, YIWU GUYUE IMPORT and EXPORT CO LTD	ընդգծող, տարբեր գույների	հատ	70	2100	30	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	30	30/11/2020թ
24	30192125	Մարկեր	Gxin, YIWU GUYUE IMPORT and EXPORT CO LTD	Մարկեր, սպիտակ գրատախտակին գրելու համար, տարբեր գույների	հատ	90	1800	20	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	20	30/11/2020թ
26	30192920	Ուղղիչ գրիչով	LIBRA, MUREX LTD	Սպիտակեցնող ջնջիչ գրիչով	հատ	80	1600	20	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	20	30/11/2020թ
28	30197230	Թղթապանակ	Tramix, YIWU GUYUE IMPORT and EXPORT CO LTD	Թղթապանակ պոլիմերային թաղանթներով / ֆայլերով/ A4, 30 թերթ	հատ	250	7500	30	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	30	30/11/2020թ
29	30197230	Թղթապանակ	Tramix, YIWU GUYUE IMPORT and EXPORT CO LTD	Թղթապանակ պոլիմերային թաղանթներով / ֆայլերով/ A4, 80 թերթ	հատ	490	4900	10	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	10	30/11/2020թ
30	30197233	Թղթապանակ	Աստղիկ, Աստղիկ գրատուն հրատակչություն	Թղթապանակ թելով, սպիտակ, կավճած ստվարաթղթից	հատ	68	6800	100	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	100	30/11/2020թ

31	30197235	Թղթապանակ	Alba Rado, BRILLIANT ACHIEVEMENT SDN. BHD.	Թղթապանակ-ռեգիստր կոշտ ստվարաթղթե կազմով, երկօղականի, հաստությունը 80 մմ, համապատասխան չափի կռնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար:	հատ	480	24000	50	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	50	30/11/2020թ
33	30197232	Արագակար	Աստղիկ, Աստղիկ գրատուն հրատակչություն	Արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար:	հատ	55	19250	350	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	350	30/11/2020թ
34	22811130	Տետր	МАЯАК КАНЦ, ООО «Маяк Канц»	Տետր, 12 էջ կանաչ կազմով (տողանի/վանդակ)	հատ	25	70000	2800	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	2800	30/11/2020թ
36	30192133	Սրիչ	Maped, MAPED HELIX HK Trading CO.LTD	Սրիչ "Maped" երկու անցքով կամ համարժեք	հատ	170	5100	30	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	30	30/11/2020թ
39	24911200	Սոսինձ	LIBRA, MUREX LTD	հեղուկ սոսինձ, էմուլսյա 60գր	հատ	120	2880	24	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	24	30/11/2020թ
40	30121210	Հաշվիչ	CITIZEN, Citizen Sistems	Սեղանի հաշվիչ, 153*199*30.5 մմ, 12 նիշանի	հատ	2700	8100	3	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	3	30/11/2020թ
41	22811150	Նոթատետր	Enlivo, YIWU GUYUE IMPORT and EXPORT CO LTD	Նոթատետր տողանի, առանձնացվող էջերով, A6 ֆորմատի, 40 էջ, սպիտակ	հատ	120	3600	30	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	30	30/11/2020թ
42	30192131	Մատիտ	Teacher, YIWU GUYUE IMPORT and EXPORT CO LTD	մատիտ Faber Castell HB Bonanza 1320 կամ համարժեք, գրաֆիտե միջուկով, սև, սրած, ռետինե ջնջոցով	հատ	25	3000	120	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	120	30/11/2020թ
43	30192350	Ժապավեն	Arm Russ, Արմ Ռուս ՍՊԸ	Նոր սերնդի հաշվիչ-դրամարկղային մեքենաների ժապավեններ	հատ	85	4250	50	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	50	30/11/2020թ
44	39263200	Գրասենյակային գիրք	LIBRA, MUREX LTD	Գրասենյակային գիրք, մատյան (A4, 3Q, տողանի), 144 էջ, սպիտակ էջերով	հատ	1400	16800	12	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	12	30/11/2020թ
45	30192730	Լամինացիայի թաղանթ	LIBRA, MUREX LTD	լամինացիայի թաղանթ, A4 ձևաչափի 125 միկրոն	հատ	41	4100	100	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	100	30/11/2020թ

ԳՆՈՐԴ
«Գավառի պետական համալսարան» հիմնադրամ

Ռեկտոր _____Ռ. Խ. Հակոբյան
Կ.Տ ստորագրություն

ՎԱՃԱՌՈՂ
«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ

Տնօրեն _____ Ա. Զանյան
Կ.Տ ստորագրություն

Հավելված N 2
14 հոկտեմբերի 2020թ. կնքված
«ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/12(1)» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	30197622	Թուղթ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
2	30192740	Թուղթ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
3	30199420	Թուղթ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
4	22991150	Թուղթ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
6	30192740	Թուղթ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
8	30199238	Ծրար	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
9	30199238	Ծրար	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
10	30197323	Կարիչ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
11	30197321	Կարիչ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
12	30197321	Կարիչ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
13	39263410	Ամրակ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
15	39241210	Մկրատ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
16	30192710	Սոսինձ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
17	30192100	Ռետին	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
18	30192220	Կպչող ժապավեն	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
19	30192210	Կպչող ժապավեն	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
20	30192121	Գրիչ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
21	30192121	Գրիչ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
22	30192128	Գրիչ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
23	30192125	Մարկեր	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %

24	30192125	Մարկեր	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
26	30192920	Ուղղիչ գրիչով	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
28	30197230	Թղթապանակ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
29	30197230	Թղթապանակ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
30	30197233	Թղթապանակ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
31	30197235	Թղթապանակ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
33	30197232	Արագակար	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
34	22811130	Տետր	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
36	30192133	Սրիչ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
39	24911200	Սոսինձ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
40	30121210	Հաշվիչ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
41	22811150	Նոթատետր	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
42	30192131	Մատիտ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
43	30192350	Ժապավեն	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
44	39263200	Գրասենյակային գիրք	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %
45	30192730	Լամինացիայի թաղանթ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	100%	100%	100%	100 %

ԳՆՈՐԴ

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամ

Ռեկտոր _____ Ռ. Խ. Հակոբյան

Կ.Տ ստորագրություն

ՎԱՃԱՌՈՂ

«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ

Տնօրեն _____ Ա. Զանյան

Կ.Տ ստորագրություն